

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն  
Տ Ա Վ ՈՒ Շ Ի Մ Ա Ր Ձ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

27-ր հուլիսի 2017թ.

## ՕՐԱԿԱՐԳ

2017 թվականի հուլիսի 27-ին ժ.11<sup>00</sup>-ին կայացած  
«Տավուշի մարզխորհրդի նիստի

1. «ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ 2017 Թ. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ Ռ.Ներսեսյան - «Տավուշի մարզպետարանի աշխատակազմի  
ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման  
վարչության պետ

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ և ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ Վ.Սուրբյան - Գյուղատնտեսության և Բնապահպանության  
վարչության պետ:

4. 2017Թ. ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ «Հ ԱԺ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Զեկուցող՝ Հ.Փաշինյան - Տավուշի մարզպետարանի աշխատակազմի  
ՏԻ և ՀԳՄ հարցերով վաչության պետի  
տեղակալ

5. 2017Թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԿԱՆ/ՏԱՈՒՇԻ ՇՐՋ./ՊԱՌԱՎԱՔԱՐ, ԻԾԱՔԱՐ, ԱՐԾՎԱԲԵՐԴ, ՄՈՎՍԵՍ, ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐԱՂԲՅՈՒՐ ԵՎ ՍԵՎՔԱՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ Ա.ՄԱՐԴԱՆՅԱՆ - Տավուշի մարզպետարանի աշխատակազմի  
ՏԻ և ՀԳՄ հարցերով վաչության ՀԳՄ ՏՍ ԳՀ  
բաժնի վարիչ

### 6. Այլ հարցեր

«Տավուշի մարզխորհրդի նիստի

27.07.2017թ.

Ք.Իջևան

Նիստը վարում էր «Տավուշի մարզպետ Հ.Աբովյանը:

Մասնակցում էին՝

Մարզխորհրդի 41 անդամներից ներկա էին 39-ը:

Նիստին ներկա էին «Տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալը, «Տավուշի մարզային դատախազը, «Տավուշի մարզպետի տեղակալները, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, պատասխանատու աշխատողներ:

**1 «ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ 2017 Թ. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ**

Մարզի 40 համայնքների 2017 թ. տեղական բյուջեների տարեկան նախատեսված եկամուտների հանրագումարը 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմում է 3450.1 մլն դրամ, որից սեփական եկամուտները՝ 921.3 մլն. դրամ, որը կազմում է ընդհանուր գումարի 26.7 %-ը, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 2528.8 մլն. դրամ, այդ թվում «Վետական բյուջեից տրամադրվող դոտացիան՝ 2349.8 մլն. դրամ:

Մարզի համայնքների 2017 թվականի տեղական բյուջեների սեփական եկամուտները 2016 թվականի համեմատությամբ ավել են նախատեսվել 175.1 մլն դրամ, այդ թվում՝ գույքահարկ 35.3 մլն դրամ, տեղական տուրքեր 6.2 մլն դրամ, գույքի վարձակալությունից եկամուտներ 7.7 մլն դրամ, տեղական վճարներ 143.2 մլն դրամ:

2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ մարզի համայնքների եկամուտների փաստացի մուտքը կազմել է 1638.4 մլն. դրամ, որը կազմում է առաջին կիսամյակի նախատեսվածի 97.3%-ը, իսկ սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 346.7 մլն. դրամ կամ կատարվել է նախատեսվածի 83.0 %-ը:

2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ մարզի համայնքների սեփական եկամուտները 2016 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավել են հավաքագրվել 52.7 մլն. դրամով, այդ թվում գույքահարկի գծով՝ 15.5 մլն. դրամ, հողի հարկի գծով՝ 2.8 մլն. դրամ, տեղական տուրքի մասով՝ 3.3 մլն դրամ, գույքի վարձակալությունից եկամուտներ՝ 3.8 մլն. դրամ, պետական տուրքեր՝ 1.2 մլն դրամ, այլ եկամուտներ՝ 26.2 մլն դրամ:

Ըստ առանձին եկամտատեսակների սեփական եկամուտների կատարողականները ս/թ հուլիսի 1-ի դրությամբ հետևյալն է.

- հողի հարկ – 2017 թ. առաջին կիսամյակում նախատեսվել է 87.8 մլն. դրամ, հավաքագրվել է 65.5 մլն. դրամ, կամ կատարվել է 74.6 %-ով (հավաքագրված

գումարից 31.2 մլն. դրամը սահմանամերձ համայնքներին փոխանցված աջակցության գումարն է):

Հողի հարկի մասով ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Վարազավան 26.7 %, Նորաշեն 33.6 %, Լուսահովիտ 35.6 %, Գետահովիտ 35.7 %, Տավուշ 37.2 %, (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը),

- գույքահարկ - հավաքագրվել է 135.8 մլն. դրամ կամ կատարվել է 91.0%-ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Բերքաբեր 23.0 %, Վազաշեն 50.1 %, Գետահովիտ 50.4 %, Չորաթան 53.3 %, Դիտավան 56.9 %, Կիրանց 62.8 %, Լուսածոր 65.8 % (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը):

- տեղական տուրքեր – հավաքագրվել է 17.7 մլն. դրամ կամ կատարվել է 88.2 %-ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Սարիգյուղ 16.7 %, Նավուր 19.1 %, Գետահովիտ 19.5 %, Չորաթան 50.0 %, Աչաջուր 50.4 %: Հարկ է նշել, որ թվով 10 համայնքներ, որոնք առաջին կիսամյակում նախատեսել են տեղական տուրքերից մուտքեր, հուլիսի 1-ի դրությամբ ընդհանրապես գանձումներ չեն կատարել: Նման իրավիճակներից խուսափելու համար համայնքների ղեկավարներին առաջարկվում է վերանայել եռամսյակային համամասնությունները (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը):

- գույքի վարձակալությունից եկամուտներ – հավաքագրվել է 35.0 մլն. դրամ կամ կատարվել է 71.9 %-ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Հաղթանակ 4.2 %, Վարազավան 4.9%, Պառավաքար 11.7%, Լուսահովիտ 13.8%, Չորաթան 14.1%, Բերքաբեր 15.6%, Սևքար 26.4 % (կցվում է ցանկը): Չինարի և Վերին Ծաղկավան համայնքները հուլիսի 1-ի դրությամբ ընդհանրապես գանձումներ չեն կատարել:

- տեղական վճարներ– հավաքագրվել է 77.1 մլն. դրամ կամ կատարվել է 83.3 %-ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Վ.Կ.Աղբյուր 27.5 %, Կողբ 31.4 % (կցվում է ցանկը):

Ցածր կատարողական ունեցող համայնքների ղեկավարներին առաջարկվում է ձեռնարկել կտրուկ միջոցներ եռամսյակային համամասնություններով սահմանված սեփական եկամուտները հավաքագրելու ուղղությամբ:

Մարզի սահմանամերձ 18 համայնքների (24 բնակավայրեր) հողի հարկի և գույքահարկի փոխհատուցման նպատակով առաջին կիսամյակում ցուցաբերվել է 31.2 մլն. դրամի պետական աջակցություն: Սահմանամերձ համայնքների ղեկավարներին առաջարկվում է հատկացված գումարները մուտքագրել հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական բազա: Ս/թ ապրիլի 12-ի դրությամբ հատկացված գումարներն ամբողջությամբ մուտքագրել են Այգեհովիտ, Բերքաբեր, Ն.Ծաղկավան, Կիրանց, Սարիգյուղ, Սևքար, Վազաշեն համայնքները, մասամբ մուտքագրել են Այգեծոր, Մովսես, Ն.Կ.Աղբյուր, Չինարի, Չորաթան, Նոյեմբերյան, Կողբ համայնքները, չեն մուտքագրել Արծվաբերդ, Պառավաքար, Վ.Կ.Աղբյուր համայնքները: Աջակցության գումարների մուտքագրման վերաբերյալ սահմանված ժամկետներում

տեղեկատվություն ներկայացրել են միայն Այգեհովիտ, Ն. Ծաղկալան և Սարիգյուղ համայնքները: Սահմանված կարգի համաձայն բազաներում մուտքագրումները պետք է կատարվեն գումարները հատկացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում: Հողի հարկի փոխհատուցման պետական աջակցության 2-րդ չափաբաժինը նշված համայնքներին տրամադրելու նպատակով անհրաժեշտ է սեղմ ժամկետում 1-ին կիսամյակում հատկացված գումարները մուտքագրել տեղեկատվական բազա և կից գրությամբ արխիվացված տեղեկատվական բազան ներկայացնել մարզպետարան:

Մարզի 40 համայնքներից 8-ը հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական բազան վարում են ինքնուրույն, իսկ մնացած 32 համայնքները Իջևանի (16 համայնք) և Բերդի (16 համայնք) համայնքների միությունների միջոցով: 2016 թվականի ընթացքում գանձապետարան մուտքագրված հողի հարկի և գույքահարկի գումարների տեղեկատվական բազա մուտքագրված գումարների տարբերությունը կազմում է 60.0 մլն. դրամ, այդ թվում գույքահարկը 25.7 մլն. դրամ, հողի հարկը 34.3 մլն. դրամ: 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ գանձապետական համակարգ մուտքագրված և տեղեկատվական բազա մուտքագրված գումարների տարբերությունը կազմում է 35.5 մլն. դրամ, այդ թվում գույքահարկը 10.4 մլն. դրամ, հողի հարկը 25.1 մլն. դրամ:

Բերված տվյալները ցույց են տալիս, որ հողի հարկի և գույքահարկի դիմաց վճարված գումարներն ամբողջությամբ չեն մուտքագրվել տեղեկատվական բազա, որի հետևանքով ինչպես տարեկան փաստացի մուտքերի և բազաների, այնպես էլ նախորդ տարիներից առաջացած ապառքների միջև առաջանում են տարբերություններ:

Հողի հարկի և գույքահարկի գումարները համայնքները յուրաքանչյուր ամիս պետք է տրամադրեն համայնքների միություններին բազաներում մուտքագրելու համար, որը շատ ժամանակ չի կատարվում: Համայնքները և համայնքների միությունները պետք է ամենօրյա հետևողական համատեղ աշխատանքներ իրականացնեն բացթողումները վերացնելու համար: Նույնը վերաբերվում է նաև հաշվառումն ինքնուրույն իրականացնող համայնքներին:

ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի 2017 թվականի հուլիսի 21-ին ՀՀ Տավուշի մարզում անցկացված խորհրդակցության արձանագրության հանձնարարականի համաձայն կրկին անգամ վերլուծվել է մարզի համայնքների 2017 թ. տարեկան բյուջեով նախատեսված սեփական եկամուտները և վեր են հանվել տեղական բյուջեների եկամտատեսակների հնարավոր ավելացումները: Համայնքները 2017 թվականի տեղական բյուջեները ընդունել են 2016 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին և գույքահարկի նախատեսումները կատարել են հիմք ընդունելով 2016թ. բազային տվյալների հաշվարկները: 2016 թ.բազային տվյալների համաձայն ֆիզիկական անձանց գույքահարկը մարզի կտրվածքով կազմում է 314.4 մլն. դրամ, իսկ 2017թ. հուլիսի 1-ի դրությամբ այն կազմում է 337.5 մլն. դրամ, աճը կազմում է 23.1 մլն.դրամ (կցվում է բազային տվյալների հաշվարկների տարբերության վերաբերյալ տեղեկանքը): Համայնքների ղեկավարներին առաջարկվում է օրենքով սահմանված կարգով տեղական բյուջեներում կատարել համապատասխան փոփոխություն 2016 թվականի համեմատությամբ ավելացված գույքահարկի գումարները ընդգրկել բյուջեների եկամտային մասում: Գույքահարկի մասով ավելացում առաջարկվում է ոչ միայն այն համայնքներին, որոնց գույքահարկի հաշվարկներն ավելացել են, այլ նաև այն համայնքներին, որոնք տեղական բյուջեների հաստատման ընթացքում գույքահարկը նախատեսել են հաշվարկային տվյալներից ցածր:

ՀՀ Տավուշի մարզպետի 18.01.2017 թ. թիվ 01/09.1/166-17, 13.03.2017 թ. թիվ 01/09.1/992-17, 14.04.2017 թ. թիվ 01/09.1/1512-17 գրություններով դիմվել է համայնքների ղեկավարներին՝ վերստին համայնքների տեղական բյուջեները

ավելացնել սեփական եկամուտները, հատկապես հողի հարկի ու գույքահարկի տարեկան հաշվարկային գումարներից ցածր նախատեսած տվյալները համապատասխանեցնել տարեկան հաշվարկին: Տեղական բյուջեով նախատեսած եկամուտները գույքահարկի մասով ավելացրել է Նոյեմբերյան համայնքը: Ամենամեծ տարբերությունը առկա է Այրում համայնքի գույքահարկի նախատեսած տվյալներում: Պատճառաբանվում է, որ համայնքների խոշորացումից հետո բազաները համայնքների միությունից հանձնվել է Այրում համայնքին և այժմ կատարվում են բազաների ճշգրտման աշխատանքներ:

2017 թ. հուլիսի 1-ի դրությամբ մարզի համայնքների գույքահարկի ապառքն առանց տույժ և տուգանքների ֆիզիկական անձանց մասով կազմում է 281.1 մլն. դրամ, իսկ հողի հարկի մասով՝ 686.8 մլն. դրամ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համայնքները և համայնքների միությունները գույքահարկի և հողի հարկի վճարված գումարները ժամանակին ավտոմատացված տեղեկատվական բազա չմուտքագրելու հետևանքով հարկատուների բազաների տվյալներում առաջացնում են պարտքեր, տույժեր և տուգանքներ, որի հետևանքով առկա ապառքները ստույգ չեն արտահայտում իրական պատկերը: Համայնքների ղեկավարներին առաջարկվում է սեղմ ժամկետում հողի հարկի և գույքահարկի վճարված անդորրագրերը մուտքագրել ավտոմատացված տեղեկատվական համակարգ և տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան: Հարկ է նշել, որ Արծվաբերդ համայնքը գույքահարկի մասով համայնքների միության հետ չի աշխատում և տեղեկատվական բազայում Արծվաբերդ համայնքի տվյալները 2008 թվականի դրությամբ է:

2017թ. տեղական բյուջեով նախորդ տարիների ապառքներից գույքահարկի մասով նախատեսել են հետևյալ համայնքները՝ Դիլիջան 15.0մլն դրամ, Աչաջուր 500.0 հազ դրամ, Բերքաբեր 294.1 հազ դրամ, Ենոքավան 67.2 հազ դրամ, Այգեպար 306.0 հազ դրամ, Նորաշեն 221.0 հազ դրամ, Չինչին 44.9 հազ դրամ, Կողբ 1814.0 հազ դրամ:

#### ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

- Նոյեմբերյանի տարածաշրջանի համայնքների խոշորացման արդյունքում համայնքապետարանների աշխատակիցների թվաքանակը կրճատվել է 52-ով: 2016թ-ի 190 աշխատողների փոխարեն 2017թ-ի փոփոխված կառուցվածքի համապատասխան պաշտոնային դրույքների թիվը կազմում է 138, աշխատավարձի մասով տնտեսված գումարը կազմում է 24.5 մլն. դրամ: Խոշորացված համայնքներից Նոյեմբերյան համայնքի սեփական եկամուտները ավելացել են 25.4 մլն. դրամով, Այրում համայնքի սեփական եկամուտները՝ 8.0 մլն. դրամով, Կողբի սեփական եկամուտները՝ 6.0 մլն. դրամով:
- Համայնքներին առաջարկվեց ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերման ընթացքում առաջնորդվել և ապահովել „Գնումների մասին” ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության որոշումներով սահմանված ընթացակարգերի կատարումը:
- Սույն թվականի հուլիսի 26-ի դրությամբ մարզի համայնքները աշխատակիցների աշխատավարձերը վճարել են ամբողջությամբ, բացառությամբ Վ. Ծաղկավան համայնքի, որը չի վճարել մանկապարտեզի երեք ամսվա աշխատավարձը՝ 1084.9 հազար դրամ

Հանձնարարվեց՝

- ՀՀ Տավուշի մարզպետարանը պատրաստ է մարզի համայնքներին ցուցաբերել

- Համայնքների միությանը հանձնարարվեց արագացնել մուտքագրման ընթացքը և այն ավարտել մինչև սույն թվականի օգոստոսի 15-ը:
- Ապառքների վճարման հարցով որոշվեց կազմակերպել առանձին խորհրդակցություն՝ համապատասխան մասնագետների և համայնքների ղեկավարների մասնակցությամբ:
- Վերին Ծաղկավան համայնքի մանկապարտեզի աշխատակիցների աշխատավարձերի պարտքի պատճառով համայնքի ղեկավարին առաջարկվեց արագացնել և կարճ ժամկետում լուծել խնդիրը :

## **2. ՀՀ Տավուշի մարզում 2016թ. գյուղատնտեսության բնագավառում իրականացված և 2017թ. իրականացվելիք աշխատանքների մասին:**

Գյուղատնտեսությունը հանդիսանում է ՀՀ Տավուշի մարզի տնտեսության հիմնական ճյուղը, ուստի մարզի զարգացման ռազմավարությունը կապում ենք այդ ճյուղի հետ: Մարզը ունի հնարավորություններ թե նոր աշխատատեղերի ստեղծման, թե բիզնես միջավայրի զարգացման համար:

Մարզում գյուղատնտեսությամբ են զբաղվում 25 հազ գյուղացիական տնտեսություններ: 2016թ. գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը կազմել է 41.3 մլրդ դրամ, որից 23.6 մլրդ՝ անասնապահություն, 17.7 մլրդ՝ բուսաբուծություն:

Վերջին տարիներին գյուղատնտեսության տարբեր ճյուղերում բացվել են շուրջ 2400 աշխատատեղեր:

Մարզի գյուղատնտեսության նշանակության հողատեսքերը կազմում են 110762.8 հա, որից՝

վարելահող	-25588.4 հա
բազմամյա տնկարկներ	- 1902.2 հա, որից՝
խաղողի այգիներ	- 1198.1հա,
պտղատու այգիներ	- 704.1 հա
խոտհարքներ	- 9401.3 հա
արոտավայրեր	- 63065.6 հա
այլ	- 10805.4 հա
Բացի վերը նշվածը տնամերձերում ևս կան	
բազմամյա տնկարկներ	- 2030.8 հա, որից՝
խաղողի այգիներ	- 158.9 հա,
պտղատու այգիներ	- 1871.9 հա

25588.4հա վարելահողից 7210.7 հա պատերազմական գործողությունների պատճառով չի մշակվում: 18377.7 հա փաստացի վարելահողից 2017թ. ցանքի տակ է դրվել 8567 հա, 46.6 %: 6403 հա ոռոգելի տարածքից 2016թ. ըստ պայմանագրերի ոռոգվել է 4773 հա:

Մարզում սկսվել և ընթացքի մեջ են բերքահավաքի աշխատանքները, 3535 հա-  
 ha /3012 հա-ո՝ օռոեն. 523 հա-ո՝ օստի/ հնձվել է շուրջ 2500 հա հատահատիկ. միօհն

բերքը կազմել է 22-25 ց: Օպերատիվ տվյալներով հավաքվել է շուրջ 18000 տոննա խոտ, 2500 տ պտուղ և հատապտուղ, 450 տ կարտոֆիլ, 400 տ բանջարեղեն:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի նույնպես շարունակվել են ՀՀ կառավարության որոշումներով հաստատված պետական աջակցության ծրագրերը /գարնանացան սերմացուներ, պարարտանյութեր, դիզելային վառելիք/:

Համայնքների կողմից վճարվել և մարզ է ներկրվել գարնանացան գարի 6.2 տոննա, գարնանացան ցորեն 1.2 տոննա, առվույտ 400 կգ, ազոտական պարարտանյութ 400 տ-ից վճարվել և հատկացվել է 346.2 տոննա, ֆոսֆորական պարարտանյութ՝ 5 տ-ից 750 կգ, կալիումական պարարտանյութ՝ 5 տ-ից 1.6 տոննա, դիզ. վառելիք՝ 342 000 լ-ից վճարվել և հատկացվել է շուրջ 46 000 լիտր: Գումարների հավաքագրման աշխատանքներն ընթացքի մեջ են:

- ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի կողմից մարզի սահմանամերձ համայնքներում գյուղատնտեսության ոլորտում 2016-17թթ. իրականացվել և շարունակվում են իրականացնել բազմաթիվ ծրագրեր /ֆինանսավորող՝ ՌԴ կառավարություն/:
- Կառուցվել են 37 հատ ջերմոցներ, ևս 7-ը ընթացքի մեջ են:
- Ընթացքի մեջ են 54 հա խաղողի այգու ոռոգման համակարգի աշխատանքները:
- Գինու 9 տնայնագործական արտադրամաս:
- Սաճիլային տնտեսություն 500 քմ:
- Միջհամայնքային գյուղտեխնիկայի 2 հավաքակայան:
- Պտղի և բանջարեղենի 6 չրանոց:
- Անտառային վայրագ պտղի և հատապտղի հավաքման կետ և չրերի արտադրություն:
- 52.7 հա ինտենսիվ այգիներ՝ սաճիլային ոռոգումով:
- Տնկարանային տնտեսություն և այգեգործական տեխնիկայի սպասարկման կենտրոն:
- Յորենի հավաքման կետ և ալրաղացի հիմնում, հացաթխման սարքավորումներ:

<<Հայաստան>> համահայկական հիմնադրամի շրջանակներում վերջին տարիներին մարզում կառուցվել է 100 հատ ջերմոց:

Տնտեսվարողի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Նոյեմբերյանի տարածաշրջանում կառուցել պտղի վերամշակման նոր արտադրամաս /այլուրեի արտադրություն/:

<<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության զարգացման>> ծրագրի շրջանակներում մարզում 2011թ.-ից իրականացվում է <<Արոտների կառավարման և անասնապահության զարգացման>> ծրագիրը:

Մինչև 2015թ. ծրագրում ընդգրկված 13 համայնքներում ստեղծվել են արտոգտագործողների սպառողական կոոպերատիվներ, որոնց կողմից ձեռք են բերվել համապատասխան գյուղմեքենաներ և գյուղգործիքներ, կատարվել են անասունների ջրարբիացման և սարամասերը իրար կապող ճանապարհների ջրահեռացման աշխատանքներ:

2015թ. ծրագրում ընդգրկվեցին և արտոգտագործողների սպառողական կոոպերատիվներ ստեղծվեցին ևս 12 համայնքներում /Վարազավան, Վ.Ծաղկավան, Տավուշ, Արծվաբերդ, Չինարի, Մովսես, Իծաքար, Ն.Կ.Աղբյուր, Բերդ, Նորաշեն, Կոթի, Կոռ, ևս 2016թ. Դիտյանի համայնքում/:



Նշված համայնքների արտավայրեր և խոտհարքներ տանող ճանապարհների վրա կատարվել են փոսալցումներ, կառուցվել են խմոցներ:

Ընթացքի մեջ են կոոպերատիվների կողմից գյուղմեքենաների և գյուղգործիքների ձեռք բերման աշխատանքները:

Մարզի տարածքում <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾՎԿ>> շրջանակներում /Հայկական միրգ/ վերջին տարիներին հիմնվել են 22.3 հա ինտենսիվ պտղատու այգիներ: Տնկարանային տնտեսություն ստեղծելու դեպքում այդ այգիները կարելի է ավելացնել /տարեկան 50 հա/:

<<Բերրի Վորլդ>> ՍՊԸ-ի կողմից Լուսահովիտ համայնքում հիմնվել է 3 հա ելակի այգի, որտեղ աշխատում են 9 հիմնական և 40 սեզոնային աշխատողներ, ամսական 120-150 հազ դրամ աշխատավարձով: Այգին ունի կաթիլային ոռոգման համակարգ և պաշտպանված է հակակարկտային ցանցով: Ամբողջ բերքը արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն և Արաբական Էմիրություններ:

2017թ. վերջին նախատեսվում է ավելացնել ևս 2 հա այգի:

<<Հայաստան>> համահայկական հիմնադրամի ծրագրի շրջանակներում Լուսաձոր համայնքի տարածքում կառուցված 150 գլխի անասնապահական համալիրում որպես տոհմային կորիզ բուծվում են Եվրոպայից ներկրված <<Սիմենթալ>>, <<Ջերսեյ>> ցեղերի խոշոր եղջերավոր կենդանիներ, որոնց մատղաշները անասնապահական համալիրում կառուցված հորթանոցում պահվում են խմբակային կարգով: Որպես մայրացու էգ հորթերը տրամադրվել են Կիրանց, Նավուր, Արծվաբերդ, Գանձաքար, Գոշ, Կողբ համայնքներում ստեղծված կոոպերատիվներին, որոնց ստացիոնար պահվածքը իրականացվում է <<ՀիմնաՏավուշ>> զարգացման հիմնադրամի կողմից կառուցված մինի-ֆերմաներում: Անասնապահական համալիրում գործում է նաև կաթի վերամշակման արտադրամաս, որի արտադրած կաթնամթերքն իրացվում է տեղական շուկայում, ինչպես նաև արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն:

2017թ. <<Գրանդ Հոլդինգի>> կողմից Արծվաբերդ և Բերդ համայնքներին նվիրաբերվել է 1-ական հացահատիկահավաք կոմբայն, իսկ Նորաշեն համայնքը կոմբայն է ձեռք բերել լիզինգով:

- Այրում համայնքի ղեկավարը իր ելույթում նշեց, որ կարկուտի հետևանքով ապրանքի տեսքը փչացել է, խնդրում է օգնել՝ իրացնելու հետ կապված խնդիրները լուծելու նպատակով: Մարզպետը իր հերթին նշեց, որ անհրաժեշտ է լուծել տեղափոխման հետ կապված հարցերը և << գյուղատնտեսության նախարարի հետ կխորհրդակցի ու քայլեր կձեռնարկեն խնդիրը լուծելու համար:

### **3. 2017թ. Ապրիլի 2-ին կայացած Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների կազմակերպման ու Անցկացման մասին**

2017թ. ապրիլի 2-ին հանրապետությունում անցկացվեցին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունները, որոնք դարձան մեր պետության ու ժողովրդի ընթացիկ տարվա քաղաքական ու հասարակական կյանքի ամենակարևոր իրադարձությունը: Ընտրությունների ընթացքը ցույց տվեց, որ ժողովրդավարության ուղին բռնած մեր հանրապետության իշխանությունները, ուսումնական ու հասարակական կազմակերպությունները ժողովրդի ուստի հասկեր

ցուցաբերեցին աննախադեպ ակտիվություն, որի արդյունքում ապահովվեց առկա ընտրազանգվածի առավելագույն մասնակցությունը ընտրությունների նախապատրաստման ու անցկացման գործընթացին:

Տավուշի մարզում ընտրությունների անցկացման համար կազմավորվել են երկու՝ թիվ 37 և 38 ընտրատարածքները: Մարզի 40 համայնքներում քվեարկությունը կազմակերպելու և ընտրողների ձայները հաշվելու նպատակով կազմակերպվել են 96 ընտրական տեղամասեր, որոնցից 43-ը՝ թիվ 37 ընտրատարածքում, 53-ը՝ թիվ 38 ընտրատարածքում՝ Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի կողմից սահմանված հերթական համարակալմամբ: Բոլոր տեղամասային կենտրոնները կազմավորվել են «Ընտրական օրենսգրքի 18 հոդվածի պահանջներին համապատասխան: Դրանք տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ժամանակին նախապատրաստվել են ընտրությունները բնականոն ընթացքով անցկացնելու համար, ապահովվել են անհրաժեշտ գույքով, սարքավորումներով, օնլայն ռեժիմով աշխատող տեսախցիկներով ու պարագաներով:

«Ընտրական օրենսգրքի 42 հոդվածի համաձայն բոլոր տեղամասերում, սահմանված կարգով, կազմավորվել են տեղամասային ընտրական հանձնաժողովներ:

Մարզի ընտրատարածքներում գործել է վստահված անձանց ինստիտուտը, իսկ ընտրությունների ընթացքին հետևել են ինչպես միջազգային, այնպես էլ տեղական դիտորդներն ու զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, որոնց առաքելությունը խոչընդոտող ոչ մի փաստ մարզի տարածքում չի արձանագրվել:

Մեծ ծանրաբեռնվածությամբ ու բարձր պատասխանատվությամբ են աշխատել ոստիկանության չորս բաժինների անձնագրային սեղաններն ու տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց համագործակցության արդյունքում մենք ունեցանք առավելագույնս ճշտված ընտրացուցակներ: Դրանց նախնական օրինակները ժամանակին կազմվել և սահմանված վայրերում՝ բոլորի համար տեսանելի տեղերում փակցվել են: Նկատված անճշտությունների ու բացթողումների վերաբերյալ դիմումները ժամանակին քննարկվել ու ընթացք են տրվել, իսկ ընտրությունից 2 օր առաջ ընտրացուցակների վերջնական օրինակները փակցվել են տեղամասային կենտրոններում:

Ինչպես ընտրական հանձնաժողովները, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինները սերտ համագործակցության մեջ են եղել ոստիկանության և ազգային անվտանգության ծառայությունների հետ, որոնց պարտաճանաչ ու օպերատիվ գործունեության շնորհիվ ապահովվել է ընտրությունների բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովների անկաշկանդ աշխատանքը:

Մարզի տարածքում հաշվառված 110037 ընտրողներից ընտրություններին մասնակցել են 73044-ը, կամ մասնակցության տոկոսը կազմել է 66.3 տոկոս: Տավուշի մարզում առավել թվով ձայներ են ապահովել Հայաստանի Հանրապետական Կուսակցությունը,

„Ծառուկյան,, դաշինքը, „Ելք,, դաշինքը և Հայ Հեղափոխական Դաշնակցությունը, որոնք էլ նշված հերթականությամբ տեղ են գրավել «Ազգային ժողովում:

Վարկանիշային ընտրակարգով Ազգային ժողովի պատգամավորներ են դարձել «Կ թեկնածու Գրիգոր Ավայանը և «ՅԴ թեկնածու Սուրեն Մանուկյանը:

«Ետընտրական կրքերը հետզհետե նվազում են, և առավել հանգիստ պայմաններում կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս ասել, որ մեր

մարզում ՀՀ Ազգային Ժողովի ընտրություններն անցել են կազմակերպված, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան: Դրա մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ թե օտարերկրյա և տեղացի դիտորդների, թե վստահված անձանց կողմից էական խախտումներ չեն արձանագրվել: Եղել են քիչ թվով անճշտություններ, որոնք ընտրությունների վերջնական արդյունքների վրա որևէ ազդեցություն չէին կարող գործել:

- Զեկույցը ընդունվեց ի գիտություն:

**4 2017թ. 1-ին ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ/ՏԱՌՈՒՇԻ ՇՐՋ./ՊԱՌԱՎԱՔԱՐ, ԻԾԱՔԱՐ, ԱՐԾՎԱԲԵՐԴ, ՄՈՎՍԵՍ, ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐԱՂԲՅՈՒՐ ԵՎ ՍԵՎՔԱՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ Օրենքի 95.1 և 95.2 հոդվածների պահանջների կատարման կարգով և ղեկավարվելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017թ հունվարի 12-ի N5-Ա «հրավական և մասնագիտական հսկողության 2017թ. աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» հրամանը և ՀՀ Տավուշի մարզպետի 2017թ. հունվարի 24-ի N23-Ա և 2017թ. մարտի 29-ի N81-Ա որոշումները, նախատեսվել և 1-ին կիսամյակում ըստ եռամսյակների սահմանված գրաֆիկով իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն մարզի 7՝ Ծաղկավան /Տաուշի շրջ./, Իծաքար, Պառավաքար, Արծվաբերդ, Մովսես, Վերին Կարմիրաղբյուր և Սևքար համայնքների ղեկավարների ու ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ, որոնց վերաբերյալ կազմվել են համապատասխան արձանագրություններ:

Հսկողության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին մարզպետարան-համայնքների ղեկավարների աշխատակազմեր համագործակցությունը դրական արդյունք է տվել: Մասնավորապես, բարձրացել է համայնքային ծառայողների, հատկապես աշխատակազմերի քարտուղարների, իրավական գրագիտությունն ու պատասխանատվությունը:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում, ըստ ոլորտների, բացահայտվել են հետևյալ թերությունները.

**Բնապահպանություն**

Ծաղկավանում /Տաուշի շրջ./, Իծաքարում, Մովսեսում, Սևքարում,

Վ.Կարմիրաղբյուրում- Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1044-Ն որոշուման 11 -րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները՝ համայնքների վարչական սահմաններում գտնվող տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգ չի իրականացվել

Իծաքարում, Պառավաքարում, Արծվաբերդում, Մովսեսում, Սևքարում, Վ.Կարմիրաղբյուրում-Չեն պահպանվել " Թափոնների մասին" ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի - բ- ենթակետի պահանջները, համայնքի վարչական սահմաններում տարածքների սանիտարական մաքրման սխեմաներ չի կազմվել

Մովսեսում, Սևքարում, Վ.Կարմիրաղբյուրում-Չի պահպանվել "Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի ե/ ենթակետի

ընության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանի մշակում չի իրականացվել,

Մովսեսում, Իծաքարում, Սևքարում Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2003թ. Մարտի 7-ի N 218 – Ն որոշման թիվ 2 հավելվածի առաջին կետի 2-րդ ենթակետի և երկրորդ կետի 13-րդ ենթակետի պահանջները /չունի հաստատված տեղանքի հատակագիծը (սխեմա), որտեղ արտացոլվում է ջրօգտագործման կետի (կորորինատական առանցքներ)՝ դրա հարևանությամբ գտնվող որևէ հայտնի օբյեկտի հետ կապը, և ջրօգտագործման թույլտվություն/

### Ֆինանսներ

Ծաղկավանում/Տաուշի շրջ./, Մովսեսում, Սևքարում, Պառավաքարում, - ՏԻՄ օրենքի 82-րդ հոդվածի համաձայն բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը և ՏԻՄ օրենքի 38-րդ հոդվածի համաձայն եռամսյակային հաղորդումները չի ներկայացվել համայնքի ավագանուն,

Ծաղկավանում/Տաուշի շրջ./, Մովսեսում, Սևքարում, Պառավաքարում, Իծաքարում, -

Խախտվել է ՀՀ կառավարության 25.08.1998թ թիվ 525 որոշման պահանջները/

Օրենքով սահմանված կարգով համայնքի ֆինանսական փաստաթղթերի

համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին: Ապրանքների և

ծառայությունների ձեռք բերումը իրականացվել է "Գնումների մասին" ՀՀ օրենքի

պահանջների և ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշման հավելված 1-ով

հաստատված կարգի 13-րդ, 17-րդ, 18-րդ կետերի թերություններով:

### Առևտուր

Ծաղկավանում/Տաուշի շրջ./, Պառավաքարում, Արծվաբերդում, Մովսեսում, Սևքարում,

Վ.Կարմիրաղբյուրում – Խախտվել են առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի

2-րդ գլխի 4-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները՝ ըստ որոնց առևտրի օբյեկտներում

սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական

արտադրանքի վաճառքը պետք է կատարվի ըստ ապրանքախմբերի՝ առանձին

բաժիններում: Նաև չեն կատարվում առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 2-

րդ գլխի 4-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ ըստ որոնց առևտրի օբյեկտը պետք է

ապահովված լինի առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքով ապրանքների

վաճառքը կազմակերպելու համար օրենսդրությանը համապատասխան ընդունման,

պահման և վաճառքի պայմաններն ապահովող սարքավորումներով և

առևտրատեխնոլոգիական պարագաներով, պահեստային, վարչակենցաղային,

ապրանքների վաճառքի նախապատրաստման համար անհրաժեշտ սենյակներով:

Խախտվել են առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի 2-րդ գլխի 6-րդ հոդվածի

1-ին կետի ե/ ենթակետի պահանջները՝ ըստ որի սննդամթերքի վաճառքով զբաղվող

առևտրի օբյեկտի աշխատողները պետք է կրեն աշխատանքային արտահագուստներ:

### Արտակարգ իրավահիճակներ

Ծաղկավանում/Տաուշի շրջ./, Իծաքարում, Պառավաքարում, Արծվաբերդում,

Մովսեսում, Սևքարում, Վ.Կարմիրաղբյուրում – Խախտվել են ՀՀ կառավարության 2011

թվականի հունիսի 10-ի N 919-Ն որոշման պահանջները/ պետական կառավարման

տարածքային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ուժեղ երկրաշարժի դեպքում

գործողությունների պլանի առկայությունը/:

Խախտվել են ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N1351-Ն

որոշման 2-րդ կետի առաջին ենթակետի պահանջները / Համայնքների ղեկավարների

կողմից ՀՀ արտակարգ իրավահիճակների նախարարություն սեյսմիկ ռիսկի

գնահատման աշխատանքների կատարման հայտերի ներկայացում, սեյսմիկ ռիսկի

ոնսահատման օպորտեռի ստեղծում/:

Աղբահանություն:

Արծվաբերդում, Մովսեսում, Սևաքարում, Վ.Կարմիրաղբյուրում - Որոշ տեղերում առկա են շինարարական և կենցաղային աղբի կուտակումներ ՀՀ Առողջապահության նախարարի 22.12.2009թ թիվ 25-Ն հրամանի 24 կետ

/ներկա պահին դրանք վերացված են/

ՏԻՄ

Ծաղկավանում/Տաուշի շրջ./, Իծաքարում, Պառավաքարում, Մովսեսում, Վ.Կարմիրաղբյուրում - խախտվել է ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 30-րդ կետը/ համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն/: Ինչպես վերոնշյալ, այնպես էլ Սևաքար համայնքում խախտվել է ՏԻՄ օրենքի 21-րդ հոդվածի 2.1 կետը/ ավագանու անդամների պարտադիր մասնակցությունը նիստերին/:

Չնայած նրան, որ բազմիցս համայնքների ղեկավարներին տրվել են գրավոր զգուշացումներ համայնքներում տրվող շինթույլտվությունների և ավարտական ակտերի օրինակները մարզպետարան ներկայացնելու համար, սակայն ՀՀ կառավարության 02.02.2002թ.թիվ 91-Ա և 626-Ն որոշումների կարգը մարզի համայնքների մի մասում դեռևս չի պահպանվում:

Նշված համայնքապետարանների աշխատակազմերի կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, առկա խնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ և անհրաժեշտ պարզաբանումների ներկայացնելու նպատակով ուսումնասիրությունների արդյունքում մանրակրկիտ վեր են հանվել թերություններն ու բացթողումները, որոնք քննարկվել են համայնքների ղեկավարների և աշխատակազմերի քարտուղարների հետ: Ձեռք առնված միջոցառումների շնորհիվ դրանք սահմանված ժամկետներում վերացվել են, որի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը անհրաժեշտ ձևաչափով ուղարկվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

- Առաջարկվեց համայնքների ղեկավարներին ունենալ քաղաքաշինական կանոնադրություն:
- Ձեկուցողը նշեց, որ շինթույլտվությունների պահեստները պատշաճ կարգով չի ուղարկվում մարզպետարան: Մարզպետը հանձնարարեց, որ այս հարցով կազմակերպվի առանձին խորհրդակցություն՝ այն պատշաճ քննարկման առարկա դարձնելու համար:
- ՀՀ Տավուշի մարզպետ Հ.Արովյանը համայնքների ղեկավարներին հորդորեց, որ աշխատողներին հասանելիք ամենամյա տրամադրվող արձակուրդները օգտագործվեն, և չօգտագործված արձակուրդների մասով պարտքեր չունենան:

ՀՀ Տավուշի մարզպետ



Արովյան